Նոյնանման գաղափար է արծարծում նաև հետևեալ երգը, որ տարածուած է Տաճկահայաստանի մի քանի գաւառներում.

Հըմա, մամս, հըմա մամս, արի ի՞նչ է էղի.
Եկած են գիս կըտանեն, ի՞նչ են բերած.
Բերած են տըմր ու տըմր, գըռ ու գըռ
Պլանկճուխն, մաղէ խարխիս, ծամ թոթվիչ.
Ու պապկիչ. ապոյին բերած են քօլօս մը,
Մախաթ ծէր կըսոսկըտայ կանեն վրէն,
Հար քոսուրայ բերան մէկ կ՚երևայ:
Հըմա եկան տարան, տարան քաւորոջ
Տուն դըրեցին, փչաւնիր կերանք.
Տէրտէր էկաւ ըրեց պըտուպուտ
Գնաց, խը ես կաժէ չենք [1]):

'Ի հարկէ, և ծնողները սովորութեան ազդեցութեան տակ նայում են իրենց աղջկայ վրայ, իբրև մի առարկայի: Շատ ուշագրաւ են այն խօսքերը, որ արտասանում է մայրը Գանձակի գաւառում պսակադրութեան գիշերն, իւր աղջկանից բաժանուելիս. «Խի՞ ես լաց ըլում, որ աղջիկն ա իր հօր տանը մնացել, որ դու մնաս: Մի բուռ մոխիր ես՝ ուրիշին ենք տալիս, պէտք ա գնաս, ջուրն ենք գըցում՝ պէտք ա սուս կենաս, ընկնես, կրակն ենք գցում, պէտք ա աչքերդ խփես, մէջն ընկնես... [2]):

VII.

Արդ կարող է հարց ծագել, թէ ո՞ւր է գնում և ո՞ւմ է պատկանում այն վճարը, որ ստացւում է հարսի գնման գործողութիւնից: Մանաւանդ հասկանալի է այս տեսակ հարցի առաջանալը, երբ մտաբերենք, որ մի քանի տեսակ ընծայաբերութիւններն ու փողերը դառնում են հարսի անձնական սեփականութիւն, որպիսին է արնագինը, որի մասին արդէն առիթ ենք ունեցել խօսելու:

---

1) «Բազմավէպ» 1902 թ. № № 9—10. եր. 481.
2) Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, եր. 27.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան